*Հավելված*
*ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի*
*2023թ. օգոստոսի 16-ի թիվ 156-Ա որոշման*

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ու Թ Յ Ու Ն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար **2023 թվականի սեպտեմբերի 19-ին ժամը 10:00-ին,** Սիսիանի համայնքապետարանի շենքում /ք. Սիսիան, Սիսական 31/ կանցկացվի մրցույթ հետևյալ պաշտոնների համար՝

1) աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.1-1),
2) աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-1),
3) աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-2),
4) աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-3),
5) աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-4),
6) աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-5),
7) աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-6),
8) աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ (ծածկագիր՝ 2.1-7),
9) աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-1, 2.3-2, 2.3-3),
10) աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-4, 2.3-5, 2.3-6),
11) աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնգետներ (ծածկագրեր՝ 2.3-7, 2.3-8, 2.3-9, 2.3-10),
12) աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-11, 2.3-12, 2.3-13, 2.3-14),
13) աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-15, 2.3-16, 2.3-17),
14) աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետներ (ծածկագրեր՝ 2.3-18, 2.3-19, 2.3-20),
15) աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-21),
16) աշխատակազմի գլխավոր մասնագետներ (ծածկագիր՝ 2.3-22, 2.3-23, 2.3-24):

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները և ՀՀ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ):

Դիմող քաղաքացիները Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, իսկ արական սեռի անձինք նաև՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ **2023 թվականի սեպտեմբերի 4-ը մինչև ժամը 17:00-ն**:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են հետևել azdarar.am և sisian.am կայքերին, իսկ պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Սիսիան, Սիսական 31, հեռ. (0283) 2-33-30/ և ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն /ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. (0285) 4-42-79/:

**Սիսիանի համայնքապետարանի**
**աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝** **Կ. Իվանյան**